



ՏՆՕՐԷՆ-ԻՄՐԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 46

ՇԱԲԱԹԱԹ

14 ՅՈՒԼԻՍ 1907

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

16 ՄԵԾԱԴԻՐ ԷԶԵՐՈՎ ԵՒ ԶՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ՀԱՄԵՍՈՒԱԾ

Կ. Պոլսոյ համար տարեկան բաժնեգին	50 դր.	Վեցամսեայ	25 դր.
Գաւառաց համար	»	»	27 »
Արսասանման	»	»	6 ֆր.

Կ Ա Ն Ի Ի Կ

ՀԱՍՅԷ՝

ՊԱՇԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ, Պապր-Ալի ճառագի Ասատուրեան տպարանի 52.

Գաւառներու մէջ գործակալներ կը փնտռուի, պայմանաւ որ երաշխաւոր մը ցոյց տան և թէ միշտ նոր բաժանորդներու անունին և հասցէին կցեն նաեւ բաժնեգինները:


Դրամները պէտք է զրկուին կամ Օսմ. Մանտարօսթով և կամ բօսթայի փուլով 20 հատը 20 դրուչի հաշուով:

آ. آصاوریان) شرکت مطبعیه مطبعه — باب عالی حاده سنه ۱۳۲۶

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապր-Ալի ճառագի 52

Հատը 40 փարա



Ձեռնի, ոտի ու անի եւ ձեռնի
փանգամայն մեղմաններ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը յաւատարմանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ռ

ՀԱՅԺԱՅԺԱՅԻՆ ԿԱՅԺ. ՓԱԼԱՅԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործութեամբ, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենանները կը ծախսին մի միայն Սինկեր Ընկերութեան լաւաւագոյն մէջ:

ՇԱՐՔԱՆԿԱՆ
ՄԱՍՆԱԿԱՎԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- | | | |
|----------------|---|---|
| ԲՆՐԱ | (| 1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին. |
| | (| 2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (| 1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (| 2. Կարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (| 1. Սուլթան համամ. |
| | (| 2. Սուլթան Պէյաղիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13. |
| ՍԿԻՐՏԱՐ | | Զարչը Պօյու, թիւ 120: |

Կատարեալ երախաւորութիւն

Մասնահիւղեր գաւառներու բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 կրկին, Տիւզդուրի տունը:




ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԿԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 46

ՇԱԲԱԹ

14 ՅՈՒԼԻՍ 1907



« ՍԱՄՍՈՆ » շոգեմարը որ սկսած է երթնելիլ Կամուրջ-Այսթեֆանու գիծին վրայ .

Թ.ԱՏԵՐԱԿԱՆ

ՔԻՉ Մ'ԱՆ ԵՍ ԸՍԵՍ

Ներշնչողն «ինչ գրեմ» վերնագրին դէմ Հանրագիտակի խմբագրութիւնը ինչ պատասխան մ'ուզած էր, ահա համառօտ պատասխան մը և այս առթիւ նոր տեղեկութիւն մը թատերական խմբիս մասին, ամէն անոնց՝ որոնք հետաքրքիր են ուրիշներու գործոց ներքինը պրպրտելու:

Օսմանեան թատերական խումբը, կազմուած ծանօթ դերասանուհիներէ և դերասաններէ, հաւաքական ընկերութիւն մ'է Մնակեան առաջնորդութեան ներքեւ, իւրաքանչիւր անգամ շահէն հարիւրի վրայ բաժին մը կստանայ ըստ արժանեաց կամ ըստ վարպետութեան:

Խումբը ունի իբրեւ Տնօրէն Մնակեան, պատասխանատու յաջս կառավարութեան, որ պարտաւոր է հսկել խաղերուն մէջ պաշտօնապէս յապաւումած կողմերուն, բեմի վրայ աղիքէ աւելցուած անպատեհ խօսքերուն, դերերու բաշխմանը և խաղերու փորձերուն, և ազդարարել խաղին անհրաժեշտ ներկայացումը:

Հոս կը սահմանափակուի Մնակեանի արտօնութիւնը, խմբին անդամներէն ընտրուած չորս անձերէ բաղկացեալ մարմին մը կայ, որուն պաշտօնն է ընտրել թատերափայլերը, թատերապետներու հետ ստեղծութիւնը, երթեւեկութեան օրերուն որոշումը, շարաթական բիւջաներու կարգադրութիւնը, նպաստներու կարգը և պայմանները, խմբին անդամներուն յաւելումը կամ պակասումը, բաժիններու սահմանը: Ասոնցմէ զատ այս մարմինը կ'ընտրէ զարձեալ խմբին անդամներէն զանձապետ մը, գործակալ մը, մատակարար մը, հաշուակալ մը, տոմսակներու հսկող պաշտօնեայ մը, գօնթիւ մը, աքսէսուա և կարսուս մը, ազդարարութեանց հագտատութեան և ապագրութեան հսկող մը ևլն.: Խումբը ունի ներքին կանոնադրութիւն մը պարտաճանաչութեան և ընկերական յարաբերութեանց մասին: Խումբը ունի նաև իւր տեսարանական համեստ պէտքերը և քանի

մը ձեռք զգեստ, որ ընդհանուրին կը վերաբարեւի, բայց ո՛ր և է պատճառաւ խմբէն զատուողը՝ իւր բաժինը չկրնար պահանջել:

Ունի նաև բաւական հարուստ բէքթթութեաւ մը, բաղկացեալ ամէն տեսակ բիւշաներէ և գօմէտիներէ: Մնակեան սոյն բէքթթութեաւ իրաւունքը իրեն կը վերապահէ, բայց չկրնար զանոնք պաշտպանել, որովհետեւ այդ բիւշաներուն գողօնները ամէն կողմ կը ներկայացուին և ժամանակէ մը վերջը ուրիշ մը բէքթթութեաւ կը կազմեն: Ահա այս այսպէս կը շարունակուի գրեթէ երեսուն տարիներէ ի վեր:

Բազմամարդ գործերու մէջ յաճախ կը պատահի այս ըսի ըսուները: Այս բաժանումը տեսակ մը եսական հիւանդութեան արդիւնքն է, որոյ բորբոքումը ժամանակ մը վերջը տեղի կուտայ և մարմինը իւր բնական ջերմութիւնը կը վերստանայ:

Գալով խմբին մէջ մէկին կամ միւսին կարեւորութեանը, խմբին մէջ շատ անգամներ կարեւոր են ու միշտ անոնց չգոյութիւնը կը ջլատէ գործը. բայց ինչպէս որ դուք կը կարծէք, մէկին կամ երկուքին բացակայութիւնը գործին համեղութիւնը չպակսեցնէր. ինչո՞ւ, վասն զի բէքթթութեաւ այնչափ հարուստ է որ, մէկ կարեւոր անդամի բացակայութեան մէջ այլ եւս անոր գլխաւոր դեր ունեցած խաղերը չեն դրուիր. որով բացական ալ չփնտռուիր, այս ալ բէքթթութեաւ հարստութեան շնորհիւ բնական մարիֆէթ մ'է, և այս կերպով խումբը կարող կ'ըլլայ իւր ներկայացումները շարունակել առանց խաղերու համեղութիւնը կորսնցընելու:

Ես՝ Պարոն Ալիքոսեանի համար ոյժ մը չէ, բնաւ կարեւորութիւն չունեցող անձնաւորութիւն մ'է չեմ ըսեր, իմ մասին այս տեսակ բան մը ըսելս ամօթ կը համարիմ, սակայն բուն կամքերու դէմ ալ չեմ մաքաւիր, փռօսախրութեան տենջը շատ բնական է:

Գալով խումբը երկուքի բամբուկու ու տրամին պոչին գօմէտի խումբ մ'ալ կազմելու մասին. ո՛չ սիրելիս, այդ բոլորովին անկարելի է, որովհետեւ գտնուած ներկայ մարմիններով հազիւ կարելի է տրամաթիկ

խումբ մը կազմել, ինչով պիտի կազմենք երկրորդ կատակերգակ խումբ մը, ո՞վ կուգայ գերասանութեան և ես ինչով պարտաւոր եմ այս հասակին մէջ աշխատելու, ես մինչեւ ցարդ հազար դժուարութեամբ պատրաստած գործս կը շարունակեմ, մնացեալը կը յանձնեմ ապագային՝ յաջողութիւն մաղթելով իրեն։

Սա ալ իբրեւ գոհացուցիչ լուր մը տամ ձեզի, իմ սիրելիս, ձեր սպասած գոհունակութեան կրնաք խմբիս ազդարարութենէն վայելել։

Մ. ՄԱԿԵԱՆ

ԽՍԲԱԳՐԻ ԿՈՉՈՒՄ

Թերթի մը խմբագրապետին հետ Բասթօրի, կանանց գլխարկներու, Պարնաթօի և երեւելի և աներեւոյթ հանքերու վրայ խօսակցելու վրայ էինք, երբ պատանի մը գլխարկը և նամակ մը ի ձեռին սենեակէն ներս մտաւ։

Թաղային վարժարանէ մը շրջանաւարտ՝ Հոգարարձութեան կողմէ ջերմասէս յանձնարարուած էր թերթին տնօրէնութեան, և կը խնդրուէր պզտիկ պաշտօն մը տալ իրեն։

«Շատ գոհ պիտի մնաք, — կ'ըսէր նամակը, — որովհետեւ Պ. Արմենակ, գրաբերս, դպրոցական ամբողջ շրջանին մէջ վարժարանիս պարծանքը եղած է իր լուրջ ուսողութեամբ, արտասովոր իմացականութեամբ և անքննադատելի վարքով»։

Պարգեւարաշխութեան հանդէսներու մէջ անմահ ճառեր գրած էր, ինչ որ ենթադրել կուտար թէ այդ պատանին մասնաւոր տրամադրութիւններ ունէր խմբագրի արհեստին համար։

Թերթը օգնական խմբագրի մը պէտք ունէր, և այդ պատանիին հետ պզտիկ բանակցութենէ մը ետք, վերջապէս ընդունուեցաւ առանց դժուարութեան և առանց ... ամսականի, — սկսելու համար — կը յաւելուր խմբագրապետը։

Ծիշդ այդ օրն ալ Անգլիական սապօնի մը

ծանուցումը բերուած էր հրատարակուելու համար։ Ըստ պայմանագրութեան՝ թերթը իւր կողմէն ռեկլամ մը պիտի ընէր ամիսը անգամ մը։

— Կարողութիւնդ հասկնալու համար, ըսաւ խմբագրապետը նորեկին, նստէ ռեկլամ մը խմբագրէ այդ սապօնին վրայ, ահաւասիկ քեզի ծանուցումը։ Եւ անշուշտ գիտես որ՝ ռեկլամ ըսելը բան մը գովել ըսել է։ Քեզի ժամ մը միջոց, քովի սենեակը գնայ, գրէ և ինծի բեր։

Եւ իրաւ, ժամ մը ետքը, ահաւասիկ Պ. Արմենակ ինչ գրած էր այդ սապօնի վրայ։

«Բէւարսին սօաքը» (Pear's soap) աշխարհիս ամէնէն աղէկ սապօնն է, ինչպէս ծանուցումն կը տեսնուի։

«Լուացքի համար մէկ հատիկ է, լաթերը չի մաշեցնէր. չորցնելու համար ալ պատուհաններու առջեւ դնելու պէտք չկայ. մեր ընթերցողները չափ գոհ պիտի ըլլան եթէ այդ սապօնը կամ աճառը գործածեն։

Ամերիկայի սեւամորթներուն արգելուած է այդ սապօնին գործածութիւնը, որովհետեւ երկու առաւօտ անով լուացուելուն պէս ձեւի-ձերմակ կ'ըլլան կոր։

«Այս սօաքը բիծեր (լէքէ) հանելու յատկութիւնն ալ ունի, բանթալօնի, ճաքէթի վրայի արատները անմիջապէս կը հանէ, մինչեւ անգամ կրսեն թէ՛ մարդիկ կան որ այդ սապօնը կը գործածեն մաքրելու համար իրենց ... պատուոյ արատները»։

Խմբագրապետին հետ միասին կարդացինք ռեկլամի այդ հրաշակերտը։ Արմենակի քով խմբագրի կերպասը կայ և պիտի յաջողի։

Սապօն մը որ պատուոյ արատները կը հանէ, ասիկայ ժէռօտէլի քովն ալ չկայ։

Ե. ԱԼՓԻԱՐ

Ամբակումի նկար մը կը ցուցնեն, որ անձրեւոտ օդի մը տեսարանը նկարուած է։ Ամբակում այս նկարը տեսնալուն պէս ձեռքի հովանոցը կը բանայ և գլխուն կը բռնէ...

— Ինչո՞ւ բացիր հովանոցդ կը հարցնեն։

— Ձէք տեսար, անձրեւ կուգայ կոր կ'ըսէ պաղարիւնութեամբ։

ԽՕՍՈՒԸՆՏՈՒՔ
ԱՂՋԿԱՆՑ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ
Կ Ա Մ

ԱՒԵԼԻՆ ՃԱՌԸ

Տիրուհիք և Տեարք,

Իմ կարծեօք՝ դպրոց մը, մասնաւորապէս աղջկանց դպրոց մը ինչպէս պարտի լինել, իմ տեսլականս ո՛րն է, յայտնում։ Ես աղջկանց դպրոց մը մտած ատենս, է՛ն առաջին բանն որ տեսնել կ'ուզեմ հոն, ի՛նչ է, գուշակեցէք. — գրքատո՞ւն, — ոչ, — դաշնա՞կ, — շատ հեռու էք, առաջին բանը՝ կ'ըսեմ կոր, — կար ու ձեւի գործի՞ք, — մօտեցաք. բայց իմ հարցմանս՝ ինձ կը թուի՝ պատասխանն և ո՛չ ոք ի հանդիսականացդ պիտի համարձակի տալ։ Ի՛նչ ստորին բան, բերան կ'առնուի՞ միթէ, մեր աղջկանց փափուկ ձեռաց կը վայլէ՞ միթէ։ Ամէնէն աւելի ա՛ն կը վայլէ. աւելի, մաքրութեան խորհրդանշանն, ես զայն կ'ուզէի տեսնել ամէնէն առաջ, Տիկնայք իմ և Տեարք, վարժարանի մը մէջ։ Կ'աղաչեմ, բժականդրութիւն չըլլայ. աւելի օրթան կենայ՝ ըսած չունիմ ես, իմ ըսածս, իմ առաջարկածս, իմ պահանջածս աւելին պարտաւորիչ գործածութիւնն է բոլոր աղջկանց ալ համար. հասարակ սենեակի աւել, կոթով մենծ աւել, թաւան սիւփիւրկէսի, չալը սիւփիւրկէսի, մէյտան սիւփիւրկէսի, կ'ուզէի բոլոր այս աւելներն ալ — ու դեռ եթէ կան ինձ անծանօթ — տեսնել աղջկանց վարժարանի մը մէջ բոլոր այս աւելներն ալ։ «Տէմիրճիպաշեանին խելքին է եկեր» պիտի մրմնջեն ոմանք, որոնց դիտողութիւն պիտի ընեն այլք՝ «Նո՛ր բարի լոյս»։ Այդ բարեսիրտ անձանց պիտի պատասխանեմ թէ Ռապրլէի, Ժան-Ժազ Ռուսօյի նման մարդիկ ալ (որոնք այնքան մեծ են անշուշտ՝ որքան ես պզտիկ) իրենց ժամանակակիցներուն աչաց յիմարներ էին։

Մեր դպրոցներու մէջ տղայք պէտք է սորվին աւել ածել, կամ՝ աղդուագոյն բացատրութեամբ՝ աւել զարնել. պէտք է յաճախ աւելուն ու սրբուն դպրոցներն որպէս և տունները։ Մաքրութիւնն առողջապահութեան առաջին պատուէրն է և առողջութեան առաջին պայմանն է, և դպրոցին մէջ աւանդուելիք առաջին դասն ըլլալ պարտի այն, չե՞նք տեսնել միշտ թէ անմաքրութիւնէ յառաջ կուգան բոլոր ա՛յն հիւանդութիւններն, որոնք շուտով մը կը տարածուին ու տրամութիւն կը տարածեն իրենց հետ աշխարհիս մէջ։ Չէնտ-Աւետան իրաւամբ կ'ըսէ. «Ո՛վ որ կը սրբէ, գուարթութիւն կը սփռէ աշխարհի վրայ»։

Բայց ինչո՞ւ համար ձեր առջեւ կը խօսիմ մաքրութեան վրայ, մաքրափայլ Տիկնայք։ Դուք կենդանի քարոզ էք մաքրութեան։ Միայն թէ... դուք ամէնքդ ալ (երանի՛ թէ սխալած ըլլայի), միայն թէ ամէնքդ ալ ձեր զաւկներուն՝ մանաւանդ ձեր աղջիկ զաւակներուն՝ ձեռք աւել տալ չէք ուզեր դուք։ Աւել՛ կ'ըսեմ, ամէ՛ն տեղ աւել։ ոչ միայն փոքրիկ գեղեցիկ մանրանկարիկ խցիկ մ'աւել, այլ բալն ալ աւել, խոհանոցն ալ աւել, սանդուխն ալ աւել, եւն, թաւան սիւփիւրկէսիով տունին էօրիւմէկները վար առնել, չալը սիւփիւրկէսին բոպիկ ոտքին տակը դնել ու տախտակները բառը բառը փառլաթմիշ ընել... Պայտղի՛ բան է առ, շա՛տ իրական է։

Արդ, որպէս զի աղջկունք առողջ, փրկկարար դաստիարակութիւն մ'ընդունին և ազատեն սերունդներն որոնք՝ իրենցմէ տըժգոյն ու տրտում՝ հորիզոնին վրայ կ'ընդունչմարումն, պէտք է որ մեր աղջկանց վարժարաններն այնպէ՛ս ըլլան՝ որպէս չեն այսօր առանց բացառութեան։ Երբ աղջիկ մը վարժարան տարուի, Տնօրէնը կամ Տնօրէնուհին հարցունելու չեն՝ որպէս կ'ընեն այսօր. «Ի՛նչ գիտես»։ ալ պէտք է հարցնեն. «Ի՛նչպէս ես. մարմինդ ի՛նչպէս է. քանի՞ տարու ես. կանոնաւոր աճում ունեցա՞ծ ես թէ խանձած մնացած ես»։ Եւ առողջին ու վատառողջին ձեռքը տալու է ո՛չ գիրքը, ո՛չ գրիչը. ո՛չ, ո՛չ, ո՛չ, երեք անգամ ո՛չ, բի՛ւր անգամ ոչ։ Աղջկան ձեռքը տալու են աւել, քաջակազմին՝ մենծ աւել, փափկակազմին՝ փոքրիկ աւել. ան հինգ մատները մէյ մը փակուելու են աւելին կոթին վրայ, փակչելու են աւելին փրկարար կոթին՝ աղջըկան հինգ մատները։ Աւել, մինա՛կ ձեռ-

քով պիտի գործածէ աղջիկը. ո՛չ, մինակ ձեռքը զօրութիւն կ'առնէ այն ատենը. ոտքով ալ աւել պիտի գործածէ աղջիկը: Գուպաները պիտի հանէ աղջիկը, բէշին ծարր վեր պիտի առնէ՝ շնորհալի ձեռով մը՝ մէշկի գօտիին մէջը պիտի անցունէ աղջիկը... Ամօթ է ... Տնօրէն, դասատու չը պիտի գտնուին դպրատան մէջ, այլ Տնօրէնուհին և ուսուցչուհիք միայն: Աղջիկը սօթսուած կազմ ու պատրաստ կեցած է. կէտէլը քոյնէ՝ թախտապէզին մէջը, թախտա պէզին՝ որ ինք կարած պէտք է ըլլայ՝ աղջիկը, ջուրն ալ հորէն ինքը քաշած ու կրած պիտի ըլլայ՝ աղջիկը: Օ՛հ, յառաջ ... Եւ, ըսեմ անկեղծօրէն իմ սպաւորութիւնս, Տիրուհիք և Տեարք իմ, աղջիկ մը ոչ ուրեք այնքան վեհ գտած եմ, այնքան գեղեցիկ, որքան բամպակ բոպիկ փայլիպիկ ոտքը՝ թխորակ բոլորախուռ չալը սիւփիւրկէսիին վրայ, աչքն ի գետին՝ վառ աչուկներն ի գետին փոփոխակի և ի յերկին, թեւը կրկնալ՝ ձեռքը մէջքին, միւս թեւն ետին՝ կամ օդին մէջ աղատ թրթռագին՝ թեւն աղջկան օդոյն մէջ աղատ ասրագին անրջագին, ալը երեսէն կը կաթէ՝ լոյսը լանջքէն կը ցայտէ, երգը մեղրը բերնէն կը հօսի՝ ու կեանքը բոլոր մարմնոյն մակերեւոյթէն, կեանքը, որ կը զեղանի, կեանքը մագերն ի վար աղջկան, ճակատն ի վար, այտերն ի վար, քունքերն ի վար, լուսալալակ կը կաթէ կը կայտօէ կը կարկուտի՝ — կեանքը, կեանքը, կեանքը. Ո՛չ, կինն երբեք աւելի գեղեցիկ և աւելի վեհ տեսած չեմ: Այդ զեղն, այդ վեհութիւնն ո՛ւմ պարտի կինն. — Այսատութեան:

Ո՛ր աղջիկն որ բժշկի երթայ (և ո՞ր աղ-
ջիկ բժշկի չերթար այսօր), արեո՞ն տկարու-
թեան դեղագգիր մը կ'առնէ : Արեա՞ն տկարու-
թեան մեծ դեղն աշխատութիւնն է, կենաց
պայքարն է, որ պէտք է դպրոցէն սկսի ո՛չ
արուեստական մարմնամարզով, ո՛չ ակնա-
կուրիչ ասեղնադործութեամբ, այլ՝ ռամկօրէն
ըսենք՝ խրզվեթով, խրզմէթ ընելով, թեւին
ճիւղին տալով, աւելելով, հորէն ջուր քաշե-
լով, տախտակ սրբելով : Կը վախճա՞նք որ
աղջիկներնուս ռաքերը կը խանդրի՞ն կը սեւ-
նա՞ն՝ երբոր գուլպանին հանեն. ընդհակա-
ռակն, աւելի կը ճերմկին ու կը փայլին, ու

միևեռորը կրկին կը սրբանայ: Կը վախճան՞ք որ ձեռքերնին ոտքերնին նապօր կապեն մեր աղջիկներուն, բայց ազնուապետական իգական ոտքերը նապօր չունին, չիյտեմ, ձեռքերուն գալով՝ ես չատ տանտիկններ, խապա խըղմէթ ընող կիներ տեսած եմ՝ որոնց ձեռքը բնաւ նապօր չունի, գիրք ու փափուկ է՝ խնամեալ ու պաշտեալ թաթիկներու հաւասար, և կլիսէձին կամ լըլուծին սոսպօնով չեն լուսացուիր այդ ժրագլուխ կիները: Կը վախճան՞ք որ մեր աղջիկներուն ճիւղերը կ'արիւնին չալը սիւփիւրկէսիէն, թող որ պատահած չէ այդ, բայց լաւագոյն չէ՞ որ արիւնին:

Ինքզմէ թ կամ մարմնոյ աշխատութիւնը ստիպել անշուշտ միայն աւելի ու սրեւել չեմ հասկնար: Աղջիկ մը պէտք է ինք իր ձեռք պատրաստէ տանը կերակուրը կամ այդ պատրաստութեան պէտք է մասնակցի գոնէ ուստի դպրոցին մէջ խոհանոց ալ պէտք է «Վարդուհի», միսին թախտակը ո՞ւր է, ո՞ւր է պալթան, դանակը. միսը կիշառեցի՛ր, գրիցի՛ր քանի՞ օրսայ է. աղէ՞կ միս է, մարիա՞ սպանեօլ չըլլայ՝. գէշ էր նէ՛ ետ խըրկէինք»: Պիտի ըսէք թէ ասոր անունը Առտընին տնտեսութիւն է, և թէ մեր դպրոցներուն մէջ սկսած է մուտ գտնել այդ ուսմունքը: Հա՛, գիտեմ ինչպէս մուտ գտած է այդ ուսմունքը մեր վարժարաններուն մէջ. ես սոսկալի տղայ մըն եմ, — կամ որովհետեւ, ա՛խ, ա՛խ, մազերուն մէջ ճերմակ ինկած է, — մարդ մըն եմ, ու պիտի յայտնեմ որ կարեւոր հաստատութեան մը Տնօրէնութեան կողմանէ ժամանակաւ հրաւերը ընդունեցայ Առտընին տնտեսութիւն դասախօսելու: Խնտացի. ուրիշ ինչ կրնայի ընել: Դրիշ բռնելը ո՞ւր, տան մատակարարութեան վրայ խօսիլը ո՞ւր. տնայէ՛ն մարդ, էս քիչէրը մտած ունի՛մ, էս մուշվախ իջած ունի՛մ, էս չամաչըր վրացած ունի՛մ, էս աւել զարկած ունի՛մ, էս անուշ եփած, միսաֆիրին անուշ հանած կամ հանել տուած ունի՛մ: Աս բաները մարս կը հոգայ, և այս հոգերը քնաւ չեն անազնուացնիր մայրս՝ որ ընտրագոյն ընկերութեան մէջ յաւէտ կը յարգուի. մայրս գիտէ գործնական առտընին տնտեսութիւն (առեցինք ալ անկորդէ չե՛ ես. սնեցնուքիւն քառին մէջ տուն կայ արդէն. քայց հոգ չէ՛՝ կրկնութեամբ խուլվիթի կ'ըլլայ):

Ե. ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ՃԱՆՁԻՈՐ ԴԷՄՔԵՐ

ԵԴՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ

Կիրակի առտու է: Քիւչիւք Մօտա եմ գացած, և հրուանդանին կուշտէն իր հաստաբուն իրանը ցցող կնձնի մը շուքին տակ՝ հաճոյքով կը դիտեմ ծովն ու ծովանիւր՝ իր բաղնիքով և բաղնիքի բնակիչներով: Գեղեցիկ հրուանդանը ամայի է սակայն: Հաղիւ մէկ երկու հոգի շուրջի ծառուն տակ ցրուած. քովօքս՝ սեւերով մանկամարդ մը ոտքը ոտքին, վարը՝ լողացող տղոցը ակնդէտ, հեռուն երկու մարդ դէմ դէմի, նարտը առջեւին: Եւ ահա վարէն մէկը կը փրթի: Գորշ հագուստներ, յարդէ ճեղք փեղոյր, ճերմակ կիսակօշիկ և ցպիկ մը ձեռքին մէջ՝ օդն ի վեր ձօճելով: Հնդկահաւի ուռեցւորած կերպարանք մը, ուսերը վեր վեր, վիզը ներս խըրած, ու դէմքին վրայ տեսակ մը սոնքութիւն՝ զոր ունեւորները երբեմն ու բանաստեղծները մի՛շտ ունին: Ճանչցայ, նոյն ի՛նքն է, Գօլանճեանը: Քովէս կ'անցնի՝ ակնարկը երկինքին:

— Քիչ մըն ալ վար նայէ, — կը ձայնեմ իրեն, — ոտքիդ տակե՛րն ալ նայէ, Աստուծո՛յ մարդը...

— Քաւ լիցի, կ'ըլլայ պատասխանը, ճշմութեք մը ձեւանալով երեսներուն վրայ՝ որ ժպիտին «քառիքաթիւռ»ն է գրէթէ:

— Հոս եկուր նայիմ, — կը կցեմ նորէն, — հո՛ս եկուր, սանկ քովս, կարօտցիր էի քեզի, տղայ, աս ի՛նչ գիրցեր, աղւորցեր ես:

— Իրա՛ւ կ'ըսէք, ըսել է ճի՛շդ է եղեր անոնց ըսածն ալ... Ես փաղաքուշ կարծեցի:

— Անո՛նք ո՛վ են...

— Մէկ քանի օրիորդներ. դրացուհիներս, նաեւ անո՛նք որոնց տունին առաջքները սովորութիւն ունիմ թափառելու...

— Ի՛նչպէս, Գատրգիւղցի ըլլալէդ ի վեր տարբերութիւն մը կ'զգա՞ս կոր: Իւսկիւտաւրին...

— Սա Սկիւտարին խօսքը մի՛ ընէք, խնդրեմ, եղբայր, ջիղերս թունդ կ'ելլան, ի՛նչպէս այնչափ ատեն ապրեմ եմ եղեր հոն... Բաբելոններու, Արշակ Մսրլեաններու և թիւթիւնճեաններու հետ...

— Ըսե՛ք է ջիղե՛ր ալ ունիք:

— Ո՛հ, բանաստեղծ ըլլալ և ջիղեր չունենալ, ամբողջ ջի՛ղ եմ հիմակ...

— ... Երբ ատեն մը ամբողջ կոճիկ էիր, ամբողջ խաղճախուղծ:

— Մարդակազմութեան դասընթացքի վերածեցինք խօսքերնիս:

— Հոգ, չէ, Գօլանս, դուն ալ քիչ մը քիչ մարդակազմութեան ծառայեմ ես, քերթուածներուդ և արձակներուդ խորախորհուրդ պարբերութիւններովը քիչ մը քիչ գլուխներու ցաւը փարատեմ ես:

— Կը շողոքորթէք կոր զիս նորէն:

— Դուն կնիկ ևս որ շողոքորթեմ, ա՛ պահ...

— «Արեւելք»ի մէջ հրատարակած վերջին մտածումներս կարդացի՞ր...

— Հապա՛, ան ի՛նչ խրթին, ան ի՛նչ գեղեցիկ խոհեր, Նիջէէն էջ մը վայելցի կարծես թէ:

— Արդէն Նիջէի վարդապետութեան համակարծիք եմ, մութ ըլլալ և խրթին, քիչերու հասկընալի...: Քովի տուներնիս դրացի մը ունինք, «թօխումճի» է, զարգացեալ երիտասարդ մը որ ըսաւ թէ «իմ ամբողջ թօխումճիութիւնովս բան մը չի կրցի հասկընալ «Արեւելք»ի մտածումներէդ...»: Տեսնայի՛ք ուրախութիւնս:

— Արդի գրականութենէն որո՞նք գիտես նայինք ճշմարիտ բանաստեղծ:

— Ճշմարիտ բանաստեղծ: Հը՛ր... դժուարինս խնդրեցեր: Մատի վրայ հաղիւ կարելի է համբել զիրենք...: Մէյ մը ես, յետոյ Ինտրան՝ Իռէնայի այդ տարփաւորը...

— Ուրի՛շ:

— Ուրիշ... Եղիան, Պուտտայի այդ երկըրպագուն, Նիրվանայի այդ սիրահարը...

— Ուրի՛շ...

— Ուրիշ երբ չիկայ ըսեմ՝ սուտ կամ մոռացում մի՛ կարծէք, վասն զի դուք «ճշմարիտ բանաստեղծ» ըսիք: Սիպիլ, Յարութիւնեան, Մեծարեց, Պարսամեան, ասոնք բոլոր «ֆոռմ»ի սիրահարներ են, ներդաշնակութեան մոլիներ, թութակներ: Մանաւանդ ան Պարսամեանը, o mon dieu! չգոյ սէրեր կը պատմէ, թացիկ տարփանքներ, երբ ինք չէ կրած զանոնք բնաւին...

— Նազարեանը հապա:

— Անոր դէմքը գրած բանաստեղծութիւններուն պէս աղւոր է, անիկա աղէ՛կ սիրային զգացում կ'արտայայտէ. — Poésie ! c'est l'art divin !

— Ի՞նչ լուրջ տրամաբանութեամբ կը դատես կոր իրերը և մարդերը, Աստուծոյ համար, քննադատելու կարողութիւն ալ ունիս եղեր դուն...

— Չէ՞ք գիտեր եղբայր, անցեալ օր Միս. Մեծարեւոյն ինձ անիծեց էի:

— Ինչո՞ւ, իրշտեթ, քերթողները իրար փետուրով իսկ չեն ծեծեր: Եւ յետոյ, լեզուակա՛ն սխալներ մտանոնշած ատենդ դո՛ւն աւելի խորունկ մէջը ինկեր էիր ատոնց...

— Ատ խօսքը մէ՛կն ալ ըսաւ ինծի ամա չեմ յիշեր կոր...: Խնդիր չէ սակայն, կը յիշէք անշուշտ որ ժամանակին են. Արմէնն ալ ջախջախած էի...

— Ատ տղուն ջախջախուիլը չեմ յիշեր կոր ես, իբրեւ թէ հողէ սափոր ըլլար անիկա քու ձեռքիդ մէջ և քարին վրայ ձգէիր զայն...

— Ատոր պէս բան մը: Կը յիշէք անշուշտ թէ «ԺԱՅՈՒՆ ԶՈՒՐԸ» վերնագրով հրաշալիէպ մը հիւսեր էի «Մասիս»-ի մէջ՝ Առաքիցի Տիար Թավեանեանին ձօնելով զայն...

— «Առաքիցի», խնկինին..., լուսցողութիւնին...: Յանգերը աղւոր չեղան բայց հող չէ դուն միտք բանին կը հասկընաս...

— Այո՛, ինչ կ'ըսէի, «Ժայռին ջուրը», կարգացի՛ք այդ գրածս...

— Ինչպէս չէ, ես Գօլանճեանի գրուածք ըլլալ և կարգալու առիթս փախցունեմ... լսուած բան է...

— Լըջօրէն կ'ըսէք, խիստ աղնիւ էք, պարոն, եթէ սա քովերնիս նստող սեւերով կինը չըլլար՝ հիմա՛յ համբուրէի պիտի զձեզ...

— Հիմա չըլլար, ետքը..., կ'ելլայ ախորժակը կը բացուի, ետքը ի՞նչ կ'ընես...

— Ո՛հ, եղեմական խօսքեր կը ծորեն կոր ձեր շուրթերէն, յուզուեցայ պարզապէս...

— Չէ, տա չեղաւ, օղը տաք է աս օր, քու յուզուիլդ վտանգաւոր է, ջուրերն ալ պաղ չեն...

— Երբ ես յուզուի կ'ըսեմ, կոյս առնութեանս քիչներուն ներշնչութիւնը, ներիսկութիւնը հասկընալու էք դուք...

— «Ներաշխարհ»էն մաս մը գոց ըրիր կ'ըսես կոր, ի՞նչ դիմացս...

— Ա՛խ, Խնտրայի այդ մտտեանը, ահա թէ ի՞նչպէս կ'ըմբռնեմ ես գրականութիւնը՝ թախրմ մը մոլոգներու քով: Ես «Ներաշխարհ»ը ամբողջ Քրանսերէնի թարգմանեցի՝ զոր մօտ օրէն պիտի խրկեմ Annalesի խմբագրութեան, հրատարակելու համար...: Կ'ուզէ՞ք մէջէն մաս մը զուրցեմ...

— Նոյն իսկ գո՞ց ալ ըրեր ես, աչք օտուռ..., տաղանդ չեմ, հանձա՛ր ես դուն...

— «Voici je m'en vais, dans l'immense soir désert, et je suis le poète, et je suis l'amoureux !...» Ասիկա վերջին գլուխէն է, զիւրին, այսինքն սիրային ըլլալուն՝ անիկա թարգմանեցի միայն...

— Հապա կ'ըսէիր թէ «Ներաշխարհ»ը ամբողջ Քրանսերէնի թարգմանեցի... մոռցար ըսածդ...

— Բանաստեղծները քիչ մը մոռցունքոտ կ'ըլլան, բայց քա՛ջ երեւակայոտ, տեսէք, եթէ կ'ուզէք, իմ հին չի հրատարակուած բանաստեղծութիւններէս անգամ հիմա՛յ տուն մը կրնամ գոց զուրցել ձեզ:

«Ան սա՛ն սակայն, սառնամուր,

Լոկ այդպէս դէս անհունին.

Զի գիտութիւնն հո՛ն է ուր

Կ'սկսի սառը մարմինն»:

Եղիան այս ոտանաւորիս թուղթը առած և համբուրած է ժամանակին. Զրաքեանը նոյն իսկ չէ կրցած հաւատալ թէ այս քերթուածը ե՛ս գրած ըլլամ: Եւ այսպիսի գնահատուած բանաստեղծութիւն մըն է ահա՛ զոր հանդէսի խմբագրապետներ անիմատ գտնելով ետ կը վերագարծնեն ձեռագիրս: Զի մնաց եղբայր, հասկացողութիւն, ճաշակ չի մնաց մերոնց քով, ելլամ բաթլիճանին տօլմանը՝ կարագրեմ՝ խնդի պէս կը հրատարակեն անկասկած...:

— Դուն ատանկ բաները տէրտ մընէր, եղուարդս, հազիւ թէ քիչ մը գիրցեր ես, կը նիհարնաս նորէն:

— Այո, նիհարութենէ կը վախճամ կոր, երբեք Դուրեան ըլլալ չը պիտի ուզէի:

— Եղիշէ Արբազան:

= Աղէկ գրող է, բայց Եղիայի միսթիք չունէն բան մը պակաս է անոր մէջ:

— Յարութիւնեանը:

= Երբեք հայ չէ ատ տղան, ոչ ալ գաւառացի, դրոշմ չունի իր գրականութիւնը, քիչ մըն ալ «Mercure de France»-էն կը շորթէ...: Այսուհետեւ Չրաքեանին քաւորդն իսկ չի կրնար ըլլալ անիկա...:

— Պէրպէրեանը...

= Խեղճ Պէրպէրեանը, հիմակ ալ ազատ եմ անկաշկանդ քննադատելու այդ «մեծապայծառ իմացականութիւն»-ը, հակառակ ատենօք իրեն սանն կղած ըլլալուն:

[Նարունակելի]

ԹԻՖԼԻՍ



ՊԱՏԿԵՐՆԵՐ

ԶՈՒԿԻՆ ՀՈԳԵՒԱՐԳ

Մշտապես սիրաբանութիւն մը կայ ծովուն ջուրերուն ու ծովկորին աւազներուն միջեւ: Ալեականութիւն թեթեւ չրփումը որքան կը թեթեւցունէ օրուան զբաղումներով բնականօրէն միտքը:

Այս իրիկուն գրեթէ ամբողջ երեք ժամ մտիկ ըրի միօրինակ երգը ծովուն, որ լացին ու հառաչին արծազանքն է կարծես ինչպէս նաեւ երջանիկին սիրոյ երգը զուարթ: Պըզտիկ, պզտիկ, ալիքներ խորշումներու չափ աննշան կուգային կը փշրուէին ծովկորին մանր աւազներուն վրայ ձերմակ մանեակներ հիւսելով անոր պարանին վրայ, ու այս անհուն ներգայնակութենէն գինովցած յիշեցի մեծ հոգեբանին Maupassant խօսքը՝ թէ՛ գեղարուեստ բոլորովին անկասար է ու անձանօք մարդկութեան: Յիրաւի, որ արուեստագէտը կրցած է ամփոփել սեւ նօթերու շարքին տակ բնական երգին իրական երաժշտութիւնը, ո՞ր երգիչը կրցած է երգել սոխակին առաւօտեան աղօթքը, բոլոր լացը,

ո՞ր նկարիչը կրցած է դնել իւր վրձինին տակ երկնքին անհունը, ծովուն կապոյտը, ալիքին ցատուժը, փրփուրին սպիտակութիւնը, և նայուածքին հոգին:

Նորածին լուսինը, հեռուն Հալիի բլրակին վրայ գիշերամուտի մշուշին մէջ ազատ լամբարի մը պէս տակաւ կը մարի, Բրօքին, որ երկար ու խոշոր անդրջրհեղեղեան կենդանիի մը նման, կը տարածուի ծովուն վրայ արգիլելով հորիզոնին հեռաւոր կապը տեսողութենէս, գիշերը տխուր պատանք մը կը դնէ բնութեան, ծովուն երգն ալ գրեթէ բոլորովին դադրած է: Լոյսի մը մօտենալը կը դիտեմ նաւամատոյցէն, ձկնորսի մը նաւն է, կորովի ծովու մարդ մը, անոր մէջ են իր երկու մանչ զաւակները, ու մեծկակ կարմիր ձուկ մը՝ նաւուն կողին վրայ նետուած: Խեղճ մահամորձին խոշոր աչքերուն մէջէն մահը կը նայի կարծես, ամբողջ բողբոջ մը՝ ու պաղատանք մը կայ այդ ակնարկին մէջ. հանդարտ ու երկար շունչ մը կառնէ ու ասորինակ ճիչ մը կարճակէ, յետոյ իւր պոչը վերցնելով ամուր կը զարնէ նաւուն կողին, ձկնորսը ձուկը պարանը թողելով կը նայի անոր, հոգեւարգ է, կը մրմռայ ու անհոգ ժպտով մը տղոցը ցոյց կուտայ կենդանին, որուն պաղելու մօտ եղող աչքերէն արցունքի չիթեր կը կաթկթին գոգցես: Անփոյթ ձկնորս...:

Պահ մը դիտելէ վերջ այս տխուր պատկերը՝ կը հեռանամ ծովկորէն, մինչ ետիս, ձուկը վերջին անգամ մ'ալ կը թոթուի ու կը մնայ անշարժ:

Լուսինը այդ պահուն սեւ ամպէ թիւլ մը ծածկած էր գլխուն...: Զուկին սուզը կը կրեր կարծես...:

ԷՏԱՐՈՆ ՍԷՅԷՐ

ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐՈՒՆ

Նիւթերու առատութեան և տեղի սննդկութեան պատճառաւ մեր համակրելի աշխատակիցներուն՝ Ներշապուհի և Ռոմանոսի յօգուածները յաջորդ թիւով, ինչպէս նաեւ կարգ մը նոր և հետաքրքրաշարժ նիւթեր:

ՇՈՓԵՆԱԻԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

(Aux interressants)

Աստուած պատան կարծես մեղքին է՛ն անուշը դրած է՝ հարսի մը առագաստի գիշերին, դպրոցականի մը պարապուրդի օրուն, կեսօրը մը հարսէն զատուած օրին, զոքանջի մը հաւնած փեսին և շուկացի էսնաֆի մը շաբաթ իրիկունին մէջ:

Ահա այդ մեղքէն անուշ շաբաթ իրիկունան մը նկարագրականն է, զոր պատիւ ունիմ նկարագրել 450 բաժանորդներու, 400 ձեռքէ գնողներու, և՛ ամօթ չըլլայ ըսելս 3698 օթխսններու:

Տեսարանն է ոսկերչաց շուկան և ժամը 10 1/2:

Երկու կիներ Նոյ Նահապետի տապանէն մնացած անքիզա գլխարկներով, քրտինքնին չըբըռ չըբըռ, խանութներէն ներս նայելով կը սլքտկան, վեր վար, մինչ խանութպաններ երեսներն լուսով, և օծիքնին դնելով կըբաղին:

— Աֆ կընես եսվրուս, Մխլայիծի Զրութափոս աղային խանութը քիչ մը կը ցուցնե՞ս մեզի, իրիծա կընենք ... կըսէ տուտուններէն մին, լացի գիշեր դէմք մը չինելով:

— Անիկայ հիմաճուկ, ես կոցեց ես կը կոցէ կոր, չիւնքիւ իրիկունները 10 1/2 ին վաքօսին կերթայ կոր տէ, պէլքի ալ կացած է ...

— Քա հա՛ իշտէ, մենք ալ ատ տէնիզ պաֆօսին նստինք տէյի Սամաթիայէն արօրօր հոս եկեր ենք, գուզում, խանութը ցուցնէիր քիչ մը ...

— Նա՛, սա սօխախը տառցիր, սօլիդ վրայ պուճախն է ... ըսելով՝ պզտիկ հայելին կը նայի քուվաթը շտկելու համար:

— Վո՛ւյ ապրիս, Աստուած կէնճ արեւդ պահէ, ըսելով կը բաժնուին անկէ, ուղղակի Զութափոս աղային խանութը գտնելու համար: Ու հագիւ փողոցին անկիւնը դարձած թէ չէ, յանկարծ կը նշմարեն իրենց փնտուած

Զութափոս աղան, որ նոյն ատին խանութը գոցելով կըբաղէր ...

— Բարի իրիկուն, վա՛յ ... ճուրերուն մէջը մնացինք տիրօր հոս հասանք նէ ...

— Քա ի՛նչ կայ, խեր ըլլայ, հիւանդ կայ, կրա՞կ կայ ի՛նչ կայ, չարիւս ըսէ ... կըսէ Զութափոս աղան երկու ձեռքը մէջքին դնելով ...

— Քա չէ՛ ... խերը կլօխդ, ատղ մ՛կլար, աս օր գործերս լմնցուցի, ճիւղնիկդ ըստրկեցի, գործարաններն ալ վար տուի, թէստին ալ հորը կախելուս կիպի, Լուսիկ տուտուն առի ճամբայ ինկայ քի, հոս գամ տէ մէկտեղ պաֆօս նստինք ես դառնանք տէյի ...

— ...
— Ամա՛ն, սուռաթդ խանթար մի չիներ կէնէ գուզում Զութափոս աղաս, էլ ալէմին կընիկը էրիկներնին ի՛նչ թուղիպէ թուղի մասրաֆները կը խօթեն կոր, իրաւցունէ սըտեղը եկեր եմ քի պաֆօսին հալէսը առնամ տէյի, ի՛նչ կըլլաս կոր ...

— Պէ գառը՞, արպատունին չօճօխը սլիլէ ատ ըրածդ չընէր, շաբաթ իրիկունով իւշէնմէտէն Սամաթիայէն ելիր չարչի եկուր, անկէ ալ նորէն վաքուով ես դարձիր ... ա՛շկ օլտուն, երեքէկ կէնիլիյի ...

— Քա չե՛ս հասկնար կոր միտք բանիս, տէրտս ծովին հոտը առնելս է, Ուսկուհին ալ անանկ, էյէր չի գալու ըլլայինք նէ եանի կա՛յ եա՛ ... պէլքի ալ մէմէս կը ծակէր ...

— Սո՛ւս քա, Եօուկիին պօստանը չենք, հոս տեղ չարչի է, հայ սաղ սէլամէթով չեկած ըլլայիք ... ըսելով խեղճ մարդը խանութը գոցելով կըբաղի, մինչ հեռուէն ուրիշ խանութպաններ ...

— Հայտէ պաքայըմ ուստա Զութափոս, սէնի պէլէյօրըզ ...

— Պու ագչամ մուզու վար մուզու, սիդ կիտին, գատէհէ սինէք տիւշտիւ ...

— Քա որի՞ համար ես սինէք կըսես կոր նէ ... եսպանծի՞ եմ, աստար տարուան կընիկդ պիտի ըլլամ, հէմ ալ ինծի չիյնար զուրցելը ամա օլտուխնա ալ ըռարութաս տեղն է, կէօքսդ կէռէ կէռէ առջիդ ձգէ տէ անանկ ճամբայ ելիր ... տահա ինչ մայիս չիռօզիներ թեւերնին կը գարնեն կոր տէ սօխախ սօխախ կը պտըացունեն կոր աննէ ճի՛ծիմ վար տէյի, ամա ի՞նչ է, գօմշուներն թա՛վուղը գօմշուեա գալ կէօզիւքիւր ...

— Կընի՛կ, կամաց խօրաթէ ըսի, երեսուներս ըռէնկէնմիշ կըլլան կոր, կամաց, կամաց ...

Մինչ այսպէս այր և կին կէս կռուոտ խօսակցութիւննին կը շարունակէին, Զոթափոս աղայի ընկեր տիշամճիները իրենց մօտենալով,

— Օն պուշուք ըլայ կիտէճէքսէք եէթիշէմէյիդ Զոթափոս աղայ ...

— Պէօյլէ կիտէրսէ կէճէ եռուրսը բօստասընա գալաճաղըդ, պագսանա այըճըլար չիֆթէ չիֆթէ ...

— Պէ ճանըմ սաթըվէր կիթսին ...

— Բաղարա չէքսէմ բէ՛ն սիւրէն օլմալ, պագսանա, տիշէրի սիլինմիշ, քայարը պօղուք ...

— Մօ՛ք քի՛մ տիրէր քի, ճէսարէթ էթմէյօրսուն, սիզինքիլէ՛ր մի տիր ...

— Եօգ ծօ՛ ... գարու գօմշու, կէմիշլէրքի վարու ըլա քէօյէ կիթսինլէր տէյի ...

— Էյ ախպար, սէն մըխլայըճըմըսըն՝ տնտես միսին, աննայամայօրըդ, քիֆ էթ պաշընտան շու նանէ մաճուլարընը պէ, Էլզէրիմէ ֆէնալըգ կէլիօր ...

Զոթափոս աղա, որ չէր ուզեր յայտնել թէ իրեններն էին, ձեւով մը կուզէ համոզել զիրենք, որպէս զի զատ զատ երթան:

— Ինծի նայեցէք, հիմա եկաք նէ ձեզի վարօռի բարա տամ տէ դուք երկնցէք, ես ալ կը հասնիմ, նայեցէք աս իրինկուն շաբաթ է, փարայ պիտի առնեմ տամ, քիչ մը գործ ունիմ ...

— Աչկ օլտուն սիրտ, կըսէ Լուսիկ, աշքերը խոշոր խոշոր բացած, փիլիճի պէս կընիկդ ինտո՞ր ալ էմիլէթ կընես կոր աս խալապալըին մէջը, հիշ խըսխաճութիւնդ կըտըկ չընէր կոր ներսիդիդ ...

— Հայտէ քա, ծուրկութիւն չուզեր, չարշիրն մէջը ինչ պիլօռներ կը մանան կելլան, մէկը սանկ ծուռ մը չի նայիր, բուլլուխ շիշէին նայո՞ղդ ով պիտի ըլլայ ...

— Դուռն անանկ գիտես, կալնիքէն սիմիթճին տեսնալու էիր, մարդը թապլան տէվրի տայիմ պերաւ, չառըմիշներ եղաւ մեղ տեսնալուն, ամա չիյտիմ քի, ինծի՞ համար էր չէնէ մի էվտօքսիին ...

— Քա պէլքի ալ իրաւ է, մարդը աճալ աճայիպ սուռաթներ մը տեսեր է նէ տրսէվէվէ բոնուէր է վախուն ...

— Տէ հայտէ էրկան լախոտը չուզեր, ատ ճիլվէներդ գիշերուան պահէ, դուռն ինծի ըռահաթ տէնիդ պաֆօռին նստեցուր, հավէսս առնել տուր, նայէ քի Լուսիան ինչ մաթա՞ն է եղէր, անկէ ետքը ինծի ձգէ ...

— Էյ հայտէ պագալըմ, վագըթլար կէլիյօր ուստա Զոթափոս, եօգ էկէր պուրտա գալաճագսան էվէ սէօյլէիմ եաթագ եռական կէճուտէրսինլէր ... անմատա ծուրկէնիօրսըն, պէ ատամ, սէն հիչ էօմիլնտէ գառը միլլէթի կէօրմէմիշմիսին ...

— Պըռագ գառտաշ, գաթը չիլէտէն չըգտըմ, սէնտէ ֆիթիլլէմէ, տուր շոշուարը սալայըմ տա, պիրլէշիրիդ, նէվալէի տիւզտիւնի՞դ միւ ...

— Համբարիկ աղա ըռագըըը ալմըշ, պիլիրսին եա, սէնտէ մէզէի ալաճագսըն, վաբօռ բարասը տա պէնտէ տիր ...

— Հայտէ Լուսիկ, չօճօսը հետերնիդ դընեմ տէ վաբօռը գացէք, նա սա չէյրէկն ալ առ, պիլէթի փարա, ես ալ հիսապս կոցեմ տէ գամ ...

— Ախ ... ախպատիւնը ... կետինին տիպը ասնին, հէմ ալ օխտը խաթ քի, տասնկ քեզի գուլիսէ կը հանեն տէ դուռն ալ ույմիշ կըլլաս, գիտես քի չիմացա՞յ ... ըռախի, մէզէ, վաբօռի բարայ, բիւթին մասրաֆը քեզի ընել կուտան կոր, իրենք ալ նստին գէֆքերուն մէջը բաթլամիշ պիտի ըլլան ...

— Կընիկ հայտէ ճամբայ ելիր, ոտքս ծառքս կը դողայ կոր ...

— Ան գիտեմ, տիշամճիներուն հալը ատ է իշտէ, իրիկուան սահաթը տասը անցաւ մի, ոտքերնին ծառքերնին կը դողայ, ըռախիէն է ըռախիէն ...

Վերջապէս երկու դարավերջիկ կիները տեղի տալով ճամբայ կելլան խանութին աշկերտին հետ դէպի շոգենաւ, և ասդին երեք չորս ընկեր իրար գալով, ուրիշ ճամբայէ մը վար կիջնան կամուրջ, պէտք եղած ուտելիքը խմելիքը շտկելու համար:

* * *

Տեսարանն է շոգենաւին վերի կողմը:

Բոլոր Գումգաբուի, Սամաթեայի և Մագրի գիւղի ժողովուրդը խռնուած է հող, ուրախ զուարթ, ամէնուն ալ գլուխը բաց գտակին ձեռքերին, թաշկինակով հապլուէ քրտինքին կը չորցնեն, մինչ մէկ քանի հողի, տասնական հատ չըռօզ բռնած, պուֆէճիին կաղաչեն որ տաքցնէ մէզէ ընելու համար:

Բազմութիւնը տակաւ կը լեցուի, շոգենաւը կը հեծէ այնքան շատ կը լեցուին կին, այր, տղայ, ծեր, բոլորն ալ ուրախ զուարթ մարմարայի օգաւէտ հովիւ ու ծովը վայելելու հրճուանօք՝ եկած բազմած են հող, զըզուած շոգեկառքին, Ծեռքի, քամամ եւն. ներէն:

Հեռուն անկիւնը խումբ մը մարդիկ նըստած կը տեսակցին, մինչ շոգենաւը Ախրբգաբուի եղերքը քերելով կը սուրայ (ինչպէս կը ցուցնէ մեր այս օրուան թիւին առաջին երեսին պատկերը):

— Հայտէ՛ պագալըմ Զութափոս աղա, պու ագչամ հիչ լաֆ էթմէյօրսն, գօրգաւըմ օ չիֆթէ գումրուլար զիհնիի չէլտիէր...

— Պըռագ Ալլահընը սէվէրսէն, գառը տէյիլ ա՛, պաշ պէլասը ...

— Ծօ՛, օ՛ սէնին գառը՛ն տըր ...

(Սխալմամբ բերնէն փախցուցած էր թէ իր կինն էր այդ քառիքաթիւուը ...):

— Եօգ ճանըմ, եանըլտըմ, չէյ, շու, եանի, սանքի ...

— Բէքէլէմէ, աննատըգ ամա՞, պէ պապամ սէն օնը սաթտա, պիր պաշկա, գուլլանըմընընը ալ, օ նէ՞ իտի պէ, հէ՞ Համբի՛կ ...

— Պէն կախարդ, եախօտ չամաշըրճը զանն իթտիմ ... կըսէ Համբիկ աղան, ուրուն աչքը սրուակին էր:

— Ախպար, գառը մէսէլէսինի պուագըն տա չագընթըմըղա պագալըմ, վաքօռ պագ

մաշալլահ ուշույօր, չիմտիտէն պաշալալըմ քի քէօյէ գառար տասնաբանեայը պիթիրմիշ օլալըմ ...

— Հագլը տըր, ծօ՛ շու չիչէյի վէր պագալըմ, գատէհէ՛ր նէրտէ ...

— Ամմատա մամաժակ ըմըշսըն, Թօգաթլըտա՞ մըյըզ ... նա՛ գատէհ ըսելով չիչը բերանը կը դնէ և չորս հինգ անգամ կոկորդը կը շարժի ու չիչն ալ մատ մը վար կիջնայ:

— Մուհապէթէ Զութափոս աղա, սուռաթընը կիւն տօլրուսընա չէվլի, եօգսա չիմտի օգույաճաղըմ ...

— Ախպար, պիլմէմքի նէ օլտում, նութգըմ թութուլտու տա գառնաքսըյա կիրտիմ...

— Աթ պէ, խննդին հացը խելօքին փորը ... սանա քիմ տէտի քի գառըլարը պաշընա թօփլա տա կէթիր տէյի ... գպրատո՛ւն հանդէսինէ մի կիրտիօրըզ ...

Շոգենաւը իր ճամբան կը շարունակէ ու մէջիններէն շատեր սրուակներով օղին կը ճնկեն ուրախ զուարթ, մինչ հեռուէն սեւ օձի մը պէս շոգեկառքը կանցնի:

— Նա՛ Բարսեղ աղա, սէնինքի կէչիյօր...

— Ըռահմէթլի զոքանջըմը կէօրիւյօրըմ պիլիրսինքի ...

— Ամանգ աքտան պապա տիւտիւքլէ..., կըսէ մէկը նաւապետին մօտենալով ...

— Տահա իսկէլէյէ կէլմէտիք ...

— Այաղընը էօքէյիմ, չէք շու տիւտիւլինիւ տէ, տէօրթ բաթաքօզ իչմիշ գառար քէֆլէնէյիմ ...

— Վո՛ւ ... ո՛ւ ... ո՛ւ ... ո՛ւ ...

— Եաշա գառտոն պապա, եաշա, էօմրիւն չօգ օլտուն քի պիզի պէօյլէ տէնիզ սէֆասը իթտիրիյօրսուն ...

— Զութափոս աղա սէնտէ շու չիչէյի աղընա ալ տա տիւտիւքլէ ...

— Զօգ օլտու ծօ՛, գատէհ եօգ տուր տա էօլիւսինի գաշըրըյօրըմ ...

— Օնըն գօլայը վար, գըռթլաղընը իւշ քէրէ օյնաթըրսան, թամամ գառապուչագ մէյհանէսինին տանկըղալարընտան պիր թանէ աթմըշ օլուրսըն ...

— Ծօ՛ պու հիսապը քիմ էթմիշ ... վայ ճիւնիւնլէր վայ, աչկ օլտուն ...

— Գում-գաբո՛ւ ... վար մը չըգաճագ,

կը ձայնէ պաշտօնեան, և չատեր կսկսին դուրս ելլալ նորաչէն նաւամատոյցին վրայէն:

Ասդին բազմութեան մէջ երկու կիներ հոս հոն նայելով կը յառաջանան,

— Գուզում պաֆօռնի, կըսէ անոնցմէ մին հոն կեցողի մը, գօծամը կէօրիւրսէն սէօյէ քի Լուսիկ սէնի առայօր տէյի ...

— Հա' ...

— Գօծամ, միւսայրճը Զոթարոս տէրլէր, պէլքի թանըրսն, հերու մաթեա չըգարտը տա, աչկս ելլայ շախոէմ շախոէմ կէթիւրտիւլէր ...

— Ճանընը սէվտիւկիւմ, նէ' պիլէմ պէն, պախ եօխարը տօղրու ըսելով պարանները կը կապէ և գործին կը նայի ...

— Երկու աչկո չեկայ հէմէն, սա եու մուրճախին նայէ, բառախ կընիկ տեսաւ տէյի թալեօն եախըսի պէս սուլանմիշ կըլլայ կոր ...

— Քա քուրուկ կոխին թառափը երկըն նանք մէյ մը, գիտնալս հոն կը նստին կոր, կըսէ ընկերուհին, և երկուքը մէկ կսկսին գէպ առաջ անցնիլ բազմութիւնը ճեղքելով:

Զոթարոս աղայի ընկերները արդէն շատոնց զլուխները տաքցուցած, սկսած էին մանի կանչել ...

— Ծօ', պիւլպիւլմիսին Տարսաւիշ, սէս մի տիր նէֆէս մի տիր, ապրիս ...

— Վէր շու շիշէի պէ ախպար, տէնիլ իւզէրինատէ տէ իշիլի, գառտաշ էվտէ իշիօրըրմ, պուռնումտան կէլիօր ըմը, պիր թառափտան ըռազը, օպիր թառափտան պաշ թիֆօսը կիպի գառը լազլազիսի, վըռ վըռ վըռ վըռ պաշըմըն էթինի եիօր ...

— Ախպար վազ կէշ, պէնիմ պաշըմտա տա վար, ամա շիմտի, պուրտա իշտիմ մի, տօղրու էվ, եէմէք, եաթազ, ծնտան սօղրա բուֆ բուֆ ուլլու ...

— Շիշէյի վէր շիշէյի ...

— Պէ պապամ, պիր բառմադ գալար, ծնրտա սազլայալըմ տէ պաշըմըզ աղրըրսա անըմըզա սիւրէրիզ ...

— Զոթարոս աղա մուհապէթէ, Ալլահ քեար աչըզըզը վէրսին ...

— Աֆիյէթ զսուռն ամա, սօլ կէօղիւմ օյնայօր, խեր տիր իշալահ ...

Ու հազիւ աւարտած էր խօսքը, յանկարծ քովէն ձայն մը,

— Բաթլամիշ ըլլաս, սըւոր սըտիղն ալ Գում-գաբուի Անցունեմին մէյխանան տառցուցի՞ր եա ... քա ի՞նչ հալէ ասիկայ, հիմա խեղքիս կուգայ ... կըսէ Լուսիկ երկու ձեռքը զլխուն գարնելով ...

— Պէ ախպար գառը պուտալասը ըսան, նէ' իշին պիղիմ իլէ ախպապըզ իսիօրսըն ... գառընը ալ տա խունուրկուտուրըն այազմասընա կիթ, ուխտ էթ քի Ալլահ մուհապէթի-նիլի արթըրոն ... կըսէ ընկերներէն մին:

— Կիմանա՞ս կոր քա' ... սըւոր սըտեղը ըրի՞ր ա ընելիքըդ ... տակդ չուվալտը՞ղ խօթեցին քի թախ կընիկներուն մէջէն ելար տէ հոս եկար, հա' ...

— Քա կեցիր նայիմ սա մարդը ի՞նչ ըսել կուզէ կոր, ինչո՞ւ այազման պիտի երթամ, քու կընիկդ այազման խրկէ քի առունը տուռումիշ ըլլայ ...

— Հայտէ մարիկս, դնայ տեղդ նստէ հայտէ, ամօթ է, բիւթիւն մեղի կը նային կոր ...

— Մեղայ, թող երթան նային, էրիկս չէ՞ մի քոյիլ ալ կուգամ ծոցն ալ կը մտնամ, իրաւցունէ մանթօնէթան չէյի, Տէր Կիրա-կոսը ողջ է տահա, անոր պսակածնենք, մահալլէ մը հալխն ալ շահիտ է ...

Զոթարոս աղա բարկութեան գեներթը հասած,

— Կընիկ, ըռատէթը ծառքէս կելլայ կոր, բանայիր պիտի բանամ, կնայ տեղդ շնթուկէ երեսի ճուրով, գէրէ ոտկս ծառքս կը դողայ կոր ...

— Թող քիշ խմէիր, անոնց վազիֆէն չէ ամա՞ ետքէն ես կը քաշեմ կոր, քառեօլային առջեւի խալին չիւրիւմիւշ եղաւ ամէն գիշեր փսխելներէդ ... Առաջ մէխանան կը խմէիր կոր հիմա ալ պաֆօռն իճատը հանեցիք ..., ախ, սա ախպապները տեսար մի, վար ամին, բիւթիւն գուլխէ հանողը ան ախպապներն են, ցերեկը տիօր օր իրինկուն քրտինք թափէ վաստկէ բեր ասոնց կերցուր, տահա կէօքսը պաց մօտա ֆիստան մը պիլէ չի չինեցիր աս տարի, քանի առ կըսեմ նէ քէսատ է կըսես, գիֆթ խմէք, ըռախիւն փարան ինտո՞ր կը կտնաք կոր ...

կնդիրը պիտի մեծնար այսպէս, եթէ հոն գտնուողներէն մէկ քանին համոզելով լուղեղով չի բաժնէին երած սիրտ կինը իր ամուսնէն:

* * *

Շողիմաւի երթեւեկը որ շատ գեղեցիկ մտածում մըն է ի դիւրութիւն ժողովրդեան, կարգ մը չպիտոյ ալ քօլամոլներ փոխանակ ծովին հովը առնելով կազդուրուելու և զօսալի ճամբորդութիւն մը ընելու, իրենց սովբած փորիկ ունակութեամբ ինքզինքնին ալքօլին կուտան, տեղի տալով կարգ մը անվայել արարքներու, որոնցմէ մին նկարագրեցինք հոս իր բնական փուլերովը:

Գում-գարուցի, Սամաթեացի և Մաքրի-գիւղցի կարգ մը անձնուրութիւններ, որոնց երեկոյեան դարձին ձեռքը կարգ մը ծրարներ կը տեսնէք, անշուշտ կը բերուիք մտածել թէ՛ որչափ ընտանեւէր են, որոնք իրենց աքդար վաստակէն մաս մը հանելով ընտանիքին պէտքերը կը կրեն, սակայն իրողութիւնը սա է որ այդ ծրարներուն մէջ, հարիւրին ութսուն, չի մը տիւր, չորս հատ չիւօզ, տասը փարայի զեքին, երկու վարուկէն ուրիշ բան չիկայ:

Շողիմաւը վայելեցէք ոչ թէ նաւաշտակը:

ԼԻԼԱ



ԹԱՏՐՈՆ ՕՍՄԱՆԵԱՆ

Սկիւսար Պաղլար-պաւի

ՕՍՄ. ԹԱՏԵՐԱԿԱՆ ԽՄԻՆ ԿՈՂՄԱՆԷ

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ Պ. Մ. ՄԱԿԵԱՆԻ

1907 Յուլիս 15, Կիւմյի գիւղեր ժամ 2 1/2 ին

ԺԱԳ ՎԱՐԼԷՅ

Թատրերգութիւն 9 արար

ՀԱՐՍԱՆԻՔ

Երկուաբքի Բերա՝ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն մէջ տեղի ունեցաւ հարսանեկան հանդէսը ծանօթ վաճառական:

ԱԶՆ. ԱՐՅԱԿ ԷԾ. ԼՈՒԹԵԱՆԻ
ԸՆԴ

ԱԶՆ. ՕՐ. ԱՐՏԷՄ Մ. ՆԱԹԼԵԱՆԻ
Կնիսհայրութեամբ Ազն. Միհրան Էֆենի Մուրաշեանի:

Հանդէսին կը նախագահէր Ամեն. Ս. Պատրիարք, իր շուրջը ունենալով Տ. Հմայեակ Դիմաստեան և Տ. Մկրտչի Վեհապետեան Սրբազաններ, ինչպէս նաեւ երեք վարդապետներ և բազմաքիւ քահանաներ ու դպիրներ:

Յաւարս եկեղեցական արարողութեանց, Նորին Սրբազան Պատրիարք Հայրը խօսեցաւ յորդորական մը հարսին և փեսին ուղեալ, որով կուռ և իմաստալից ղոնով մը բացատրեց Պատրիարքութեանը և երջանկութեան մաղթեց նորապսակ ամուսին:

Պատրիարքութեան արարողութիւններէն վերջ՝ հարսնեւորները, բոլորն ալ ակամաւոր անձնաւորութիւններ՝ որոնք հանդերձ ընտանեօք եկած էին պատուել սոյն հանդէսը, առաջնորդութեան Սրբանիսի սրահը, ուր պատուասիրութիւններ և բարեմաղթութիւններ եղան ի պատիւ հարսին ու փեսին, և յասկապէս շնորհած նոյն պիւճի մը առատօրէն տրամադրեցի եւ հրաւիրեալներու սուսարքիւ մը:

Սրբազան Պատրիարք Հայրը պահ մը Սրբանիսի սրահը հանգիստ առնելի վերջ մեկնեցաւ, յորմէ հետէ սկսան խախնանքներ, նուագածուաց ընտիր խումբի մը յետախուր և զբօսալի կտրներուն ի լուր:

Խախնանքիւն տեղեցին մինչեւ իրիկուան ուշ տեսն, ուրկէ վերջ հարս ու փեսան շփեղ կառնով մը մեկնեցան Թատրապետի Թօգարեան պանդոկը, ուր պիտի մնան մեկ քանի օր Ոսփորի գեփիւղին հետ, վայելելու մեղրալուսնի անուշ կեանքը:

Խմբագրութիւն ջերմապէս կը խնդակցի այս ազնիւ միութեան համար և կը փութայ իր ջերմ բարեմաղթութիւնները ընել հարսին և փեսին, երկուսեք ծնողաց և պարագաներուն:

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԳՈՒՄ-ԳՍԲՈՒ. — Սկիւտար Գուք-պօլ գլխաւի ջերմ պաշտպանը այս օր արեւելեան ճեպնթացով, Եէտի-գուլէի ջերմուկները մեկնեցաւ:

ՆՈՅՆ. — Հոս մի քանի տեղացիներ, քաղական աղա չչնորուելուն համար սոսկալի վշտացած են կրուռի: (Ոտքերնին ջուրը թող զնեն որ մեծնան և յաջորդ ընտրութեան պատրաստուին. Ծ. Խ.):

ԳՍՏԸ-ԳԻՒՂ. — Լսածնուս նայելով հոս եկեղեցւոյ լանկալը ի տես ժողովրդեան եկեղեցւոյ կարեւոր նորընտիր պաշտօնեայ մը նառկիլէն անկած քեկալէի կը քաշէ եղեր: (Ժամկոչն ալ թող իմովու խաղայ. Ծ. Խ.):

ՇՈՒԿԱՅ. — Լեզուագարութիւն չընելու բարի խրատը լսող ծանօթ Արթն էմմին, երեսները Եալովայի խառնուկին պէս ուռեցնելով սկսաւ կրկին շարունակել իր հայնոյութիւնները աջ ու ձախ: Անգամ մ'ընդ միշտ կը յիշեցնենք իրեն սա առածը որ կրտս «որ ոչ լուրջէ ունկամը, լուրջէ թիկամը...» ֆալսիւսան կերած ես հրամանքդ ...:

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ. — Թերթիւ Տնօրէնին անձնական կառքը բազմալու համար բազում նշանած երիտասարդներ ալ, կ'իմանանք թէ մեր սրամիտ մրցումը կը փորձեն եղեր, բայց պէտք է դիտնան թէ եհնասի հետ ափսոսանքով մանի վրայօք բան մը խնայած չէր նախապէս:

ՍԿԻՒՏԱՐ. — Պարոն Ռոմանոս կը գերեր թէ՛ լրագրի ցրուիչներ այս պահուս արքիսքի հովեր կ'առնեն. պարագայ մը՝ գորանչուշտ ճաշակի անկման վերագրել ուզած է: Սակայն պէտք է գիտնայ որ այսօրուան ցրուիչը՝ վաղը կրնայ արքիսք մը ըլլալ աշխատութեամբ. ինչպէս որ այսօրուան ոտքի վրայ գուլպա, թաշկինակ ծախող մը՝ յառաջիկային կրնայ առաջնակարգ վաճառական մը ըլլալ գործունէութեամբ, մանաւանդ երբ բնականէն ալ օժտուած է:

ՊԵՅԲՕԶ. — Կը յանձնարարենք դեղագործ, խախլէճի, ախտէր թաղական աղային՝ որ աս ու ան տէնէկի քաշել չտայ ... տէրատէրը բանքատող կարծելով:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻԶԱԿ

Վարժարանին նպատակն է իր ուսանողներուն տալ դործնական կեանքի պահանջներուն համապատասխանող հիմնական և առողջ դաստիարակութիւն մը: Բնիկ և Ամերիկացի ուսուցչական խմբին վրայ աւելցած է, Չուիցերացի ձեռնհաս ուսուցիչ մը՝ մասնաւոր դժ տալու համար նաեւ ֆրանսերէն լեզուին:

Աշակերտները կը վայելեն բժշկական և բնութեական կատարելալ խնամք վարժարանին մասնաւոր բժիշկին, գիշերօթիկ հինգ ուսուցիչներու անմիջական հսկողութեան և Տիկին Չեմպրոֆ մայրական խնամքներուն տակ:

Վարժարանին յառաջիկայ տարեշրջանը կ'սկսի Սեպտեմբեր (Ն. Տ.) ԴՆ Գիշերօթիկներուն տարեթոշակն է 16 Օամ. Ոսկի, որուն կէսը վճարելի է Սեպտ. Ին սկիզբը, իսկ մնացեալը՝ Յունվարի մէջ: Գործիական երաժշտութեան դասին համար կը պահանջուի տարեկան մէկ ու կէս Օամ. Ոսկի:

Թէ՛ հին և թէ՛ նոր աշակերտներ, եթէ կ'ուզեն Հայտարար-Փաշայէն կէս գնով ծամբորդել, պէտք է դիմեն Գրեգոր Էֆ. Շահպաղեանի և իրենց անունները արձանագրել տան մինչեւ Օգոստ. 17:

Աւելի տեղեկութեանց համար դիմել Մր. Բիթի կամ Վարժարանի Պաշտպան գործակալաւոր Դր. Էֆ. Շահպաղեանի, Պաշտպան Վ. Պոլիս, և կամ Տնօրէնութեան, Պարտիզակ:

ՀԱՅՈՒՆԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ

ԱՍՏԻԶԱԿ

Հայուհեաց Վարժարանին նպատակն է Հայ աղջիկներուն տալ լուրջ դաստիարակութիւն մը՝ զարգացած և բարեկիրթ տանտիկիներ և դաստիարակութեան գործին օժանդակներ պատրաստելու համար: Վարժարանին տեսչութիւնը աշակերտուհիներուն ֆիզիքական, իմացական և բարոյական զարգացումը միշտ խղճամիտ հսկողութեան առարկայ կ'ընէ: Բնիկ և Ամերիկացի 12 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը կ'աւանդէ Հայ, Անգլ. Թուրք. և ֆրանս. լեզուները. ինչպէս նաեւ բնական, իմաստասիրական, չափական և այլ գիտութիւններ: Մնայուն կարուհի մը կ'աւանդէ ձեռագիտութեան, կարի և ձեռագործի դասերը: Գիշերօթիկներու տարեթոշակն է 12 Օամ. Ոսկի, որուն կէսը պէտք է հատուցանել տարեշրջանին սկիզբը, և կէսը ծննդեան արձակուրդին: Դաշնակի և երգչոյնի համար կը պահանջուի 5, 3 և 2 ու կէս Օամ. Ոսկի, դաստիարակութեան թիւին համեմատ: Վարժարանին յառաջիկայ տարեշրջանը կ'սկսի Սեպտ. 11 ին (Ն. Տ.) ԴՆ. Իրեկունը:

Աւելի տեղեկութեանց համար խնդրել վարժարանին յայտագրերը, կամ դիմել Մր. Բիթի, Պաշտպան Վ. Պոլիս, կամ գրել Տր. Ս. Էֆ. Գալաֆեանի, Ատենայտ խնամակալութեան, Ատարազար:

Արտօմսք ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳ. Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Պապը-Ալի հաստիքի թիւ 52.

ՎԱԳՐԻ ՄԸ ՀԵՏ ԱՌԱՆՁԻՆ

ՈՐՍՈՐԴԱՎԷՊ

Սակայն, — շարունակեց Պ. Ռօպէռ, — պատմութեանս կատարեալ վերջաւորութիւն մը տալու համար, պէտք է ըսեմ թէ, հետաքրքրութիւնը մղեց քարթէն Մաք-Քլէյնընը ի վերջոյ, տեղեկութիւններ առնել վագրին ու տակառին վրայ: Բայց ինչ որ կրցաւ գիտնալ երկրին տեղագրութիւնը՝ սա էր թէ, զմեզ տանող շոգենաւին անցքէն երկու երեք տարի վերջ, երկու մատաղ վագրեր սպաննուեցան շրջակաները: Երկուքին ալ պօշին արմատները տարօրինակ խոշորութիւններ ունեցած էին, գրեթէ ձէթի պղտիկ տիկերու ձեւով և մոծութեամբ կունտութիւններ: Թէեւ հակառակ եղած փնտռութիւններու, միայն վագրի մը մօրթը գտնուեցաւ, որուն իրրիւ զարդարանք ծառայող ամենակարեւոր մասը կը պակսէր, այսու հանդերձ քարթէն Մաք-Քլէյնըն կարող եղաւ հաստատել որ ատ երկու մատաղ վագրերը, խնդրոյ առարկայ եղող վագրին ծնունդն էին: Ամէնէն ցաւալին ալ այն է որ այդ երկու փոքրիկ վագրերը ողջ բռնուած չէին, որպէս զի կարողանային կենդանաբանական հաւաքածոյի մը զարդերը կազմել: Պիտի կարենային մեծ լոյս մը սփռել, հակառակ բոլոր վիճաբանութիւններու, տակաւին մութ մնացած սա խնդրոյն վրայ թէ՛ արտաքին առարկաներու միջոցաւ մօր մը վրայ յառաջ եկած զգայութիւնները մինչեւ ո՛ր աստիճան կրնան աղդել իրեն ծոցին մէջ արգասաւորող սերմին ֆիզիքական կազմաւորութեանը վրայ:

* * *

... Պ. Ռօպէռ պատմութեանը վերջ դրաւ այն PENERIE-ի միջադէպերուն, զորս կը պատմէին էսաու սմիթէի ճաշարանին մէջ:

Այդ օրէն ի վեր, երբ մէկը կսկսի իր արշաւանքներու պատմութիւններուն, զայն լուծութեան դատապարտելու համար, բանաձեւ մը հնարած են, որ առածի կարդ անցած է, ու «քարթէն Մաք-Քլէյնընի տակառը ծակեցէք» կ'ըսեն: Ու ներկայները խնդուքներով և քրքջալիւր հուրրաներով պատմողին ձայնը կը խեղդեն:

Պ. Ռօպէռի պատմած միջոցին, ես ալ ներկայներէն մին էի, անկէց ի վեր ուղեցի գիտնալ թէ ի՞նչ եղած էր այն արի ու իմաստուն քարթէն Մաք-Քլէյնընը:

Ահաւասիկ ինչ որ գրած է ինծի այս մասին Պ. Ռօպէռ:

«Սիրելի Պարոն,

«Դուք կը փափաքիք ճանչնալ իմ աղնիւ բարեկամիս Մաք-Քլէյնընի ինչ ըլլալը: Անդարձ կերպով մեկնած է այս աշխարհէն: Շատ խիզախ բնաւորութեան տէր էր չի շարունակելու համար իր յանդուգն ձեռնարկները: Ինը տարի կայ որ, նորէն մեկնեցաւ: Եւ Հընդ-կական երկրին վրայ, որ երբեմն վկան եղաւ իր յաղթութեան և որուն ես կը պարտիմ իմ կեանքս, վերսկսիլ ուղեց իր «ֆօն-կապ»ի փորձառութիւնը: Յաջողութեամբ բռնեց վագրին պոչը նորէն, և քիչ մը ատեն ուժով մը բզահեց. բայց ձախորդութեան բերմամբ, կենդանին մօրթային հիւանդութենէ վարակուած էր, հաստատուն չէին վերնամօրթին վրայի մազերը՝ որոնք քարթէնին ձեռքին մէջ մնացին, և պօք տակառին խպանին (bonde) մէջէն սահելով, վագրը դարձաւ, ու նոյն հետայն իմ քաջարի բարեկամս դադրեցուց ապրելէ, գերմարդկային ոգորումի մը մէջ զինքը յոշոտելով ...»:

Հաճեցէք ընդունիլ, սիրելի պարոն, հայն:

Թարգմ.

ԹՕ.

«Ձերդ անձնուէր

Ժ. ՌՕՊԷՐ»

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ


ԼԱՆՑԵՐԶԵՆԴՆԱՅ

Արանց, Կանանց և Տղայոց
ՊԼՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ և Ընկ.

Գ. Պոլիս, Սուլթան Համամ, Թօփալեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ
տոկունութեամբ և գիներու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրին
դիմող յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր
հագուստներու, կանանց թելըռիկներու
և տղայոց շիք և դիմացկուն փոքրիկ-
ներու ճոխ միջերը մը պատրաստ ունի,
որ ջերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հագուստի և ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրչ է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—44



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՅԷՔ

ՓՈՒԹԱՅԷՔ ԳՆԵԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեռալ պէշ խանին
տակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյլանէ,
Չինաստանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ և Ճա-
թոնէ:

Ամենէն դժուարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փետուեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ և փոքր քանակութեամբ:

Ուշադրութիւն մարտային:

Ա Պ Ա Ռ Ի Կ

6 ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆԱԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊՈՒԿ
5000Է ԱՒԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիգի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բազմատեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, եայլն. նաև անուններու սկզբնատառով գոհարազարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձև շղթայներ, ասոնցմէլ պատ մէջն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ գղեստներ, կօշիկներ ու գլխարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա վերարկուներ, բոլորէ և մետաքսէ շրջագգ եստի կերպասներ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խոտա, ամէրիգան, պասմա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ լուացքի, լուսանկարի, կրամօֆօն, ինչպէս նաեւ կարի ձօնա. Նովման եայլն:

Ունինք նաև եւրոպական նուրբ ճաշկով պատրաստուած կահ կերասիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրեղէնք, ամէն տեսակ վառարաններ, նաև բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ ինն:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ շահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաև իր ապրանաջ տսկունութիւնը, նրբութիւնը և աժաւ նութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղը

Շաբաթական և ամսակն վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք դիմել ՀԵՐՃԱՅԻ Վաճառատուն

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

50—33



ՔԵՒԵԼՔ ՕՐԱՆ

ԹԵՐԹ ազգային, գրական եւ քաղաքական: — Բաժանորդագրութիւն՝ տարեկան Կ. Պոլսոյ համար 80 դրուշ, գաւառներու համար 108 դրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր.: Զեւքէ վաճառում՝ տասը փառա: Հասցէ՝ Ղալաթիա, Բամանտօ փողոց: ԱՐԵՒԵԼՔ հրա լարակ կ'ելլէ ամէն օր, կէս օրին, խընաւեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

բով, առաջնակարգ տեղ մը կը զբաւէ տեղական հայ մամուլին մէջ, օր առօր աւելի հրապուրիչ դառնալով՝ նորանոր լարերքումներու շնորհիւ գորս ներմուծած է թերթին մէջ: Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԲՄԱՅԻ ԲՄԱՅԻ հանդամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսարաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեղանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բաց ի գրական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ ու Զուարթնօթերէ, որոնք նիւթերու ճոխ պէսպիսութիւն մը կը կազմեն: